Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 17th August 2025 Bulletin 35/2025

Feast of the Assumption of the Holy Mother of God

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 3:29-4:7

Իսկ եթէ դուք Քրիստոսինն էք, ուրեմն Աբրահամի զարմն էք, եւ խոստումին համաձայն՝ ժառանգորդներ:

Բայց այնքան ատեն որ ժառանգորդը մանուկ է, կ'ըսեմ թէ ոչինչով կը տարբերի ստրուկէ մը, թէպէտ բոլորին տէրն է. հապա խնամակալներու եւ հոգատարներու հեղինակութեան տակ է՝ մինչեւ հօրը ճշդած պայմանաժամը: Նոյնպէս ալ մենք, երբ մանուկ էինք, աշխարհի սկզբունքներուն տակ ստրուկ էինք: Բայց երբ ժամանակը լրումին հասաւ, Աստուած ղրկեց իր Որդին՝ որ կնոջմէ ծնաւ եւ Օրէնքին տակ մտաւ, որպէսզի փրկանքով գնէ Օրէնքին տակ եղողները. որպէսզի մենք որդեգրութի՛ւնը ստանանք: Եւ քանի որ դուք որդիներ էք, Աստուած ձեր սիրտերուն մէջ ղրկեց իր Որդիին Հոգին, որ կ'աղաղակէ. «Աբբա՛, Հա՛յր»: Հետեւաբար ա՛լ ստրուկ չես, հապա՝ որդի. ու եթէ որդի, ուրեմն՝ Աստուծոյ ժառանգորդը Քրիստոսի միջոցով:

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

The Epistle of St Paul to the Galatians 3:29-4:7

If you belong to Christ, then you are Abraham's seed, and heirs according to the promise.

What I am saying is that as long as an heir is underage, he is no different from a slave, although he owns the whole estate. The heir is subject to guardians and trustees until the time set by his father. So also, when we were underage, we were in slavery under the elemental spiritual forces a of the world. But when the set time had fully come, God sent his Son, born of a woman, born under the law, to redeem those under the law, that we might receive adoption to sonship. b Because you are his sons, God sent the Spirit of his Son into our hearts, the Spirit who calls out, "Abba, c Father." So you are no longer a slave, but God's child; and since you are his child, God has made you also an heir.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 2:1-7

Այդ օրերը Օգոստոս կայսրէն հրամանագիր ելաւ, որ ամբողջ երկրագունդը արձանագրուի: (Այս առաջին աշխարհագիրը եղաւ՝ երբ Կիւրենոս Սուրիայի վրայ կառավարիչ էր:) Բոլորը կ'երթային արձանագրուելու, իւրաքանչիւրը՝ իր քաղաքին մէջ:

Յովսէփ ալ՝ Գալիլեայէն, Նազարէթ քաղաքէն, բարձրացաւ դէպի Հրէաստան՝ Դաւիթի քաղաքը, որ Բեթլեհէմ կը կոչուի, (քանի ինք Դաւիթի տունէն եւ գերդաստանէն էր,) արձանագրուելու Մարիամի հետ, որ իր նշանածն էր ու յղի էր: Երբ անոնք հոն էին՝ անոր ծնանելու օրերը լրացան. եւ իր անդրանիկ որդին ծնաւ, խանձարուրով փաթթեց զայն ու մսուրին մէջ պառկեցուց, որովհետեւ իջեւանին մէջ տեղ չկար իրենց:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 2 :1-7

The Birth of Jesus

In those days Caesar Augustus issued a decree that a census should be taken of the entire Roman world. (This was the first census that took place while a Quirinius was governor of Syria.)

And everyone went to their own town to register.

So Joseph also went up from the town of Nazareth in Galilee to Judea, to Bethlehem the town of David, because he belonged to the house and line of David. He went there to register with Mary, who was pledged to be married to him and was expecting a child. While they were there, the time came for the baby to be born, and she gave birth to her firstborn, a son. She wrapped him in cloths and placed him in a manger, because there was no guest room available for them.

Տոն Ճողակաթի՝ Ս. Էջմիածնի, ըստ Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքի

Ճողակաթի տոնը Ս. Էջմիածնի Մայր Տաճարի նավակատիքի տոնն է: Ըստ Ազաթանգեղոս պատմիչի՝ հայոց աշխարհի երկրորդ լուսաւորիչ Ս. Գրիգորը մի տեսիլք է տեսնում, ուր Քրիստոս Աստված իջնում է երկնքից և ձեռքի ոսկե մուրճով հարվածում Սանդարամետ կոչված կռատան տեղում: Աննկարագրելի ու զարմանահրաշ այս տեսիլքով Միածինը մատնանշում է Մայր տաճարի հիմնադրման վայրը: Սրբի այս տեսիլքը կոչվում է «Ճողակաթ», քանզի Ս. Գրիգոր Լուսավորիչը տեսնում է, թե ինչպես է երկնքից մի շող կաթում: Պատմական տեղեկությունների համաձայն, Էջմիածնի Մայր Տաճարը նվիրագործվել և օծվել է 303 թվականին, Ս. Կույսի Վերափոխման տոնի օրը: Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ քանի որ Մայր Տաճարը նվիրված է Սուրբ Աստվածածնի անվանը, Հայ Եկեղեցին Վերափոխման տոնի նախընթաց շաբաթ օրը նշում է Ճողակաթի տոնը: 1700 տարի հայ մարդու համար նվիրական ուխտատեղի դարձած Մայր Աթոռ Ս.

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

1700 տարի հայ մարդու համար նվիրական ուխտատեղի դարձած Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատքի օրրանն ու սրբություն սրբոցն է՝ իր հոգևոր, ազգային ու պատմական նշանակությամբ՝ հիմնադրված Աստծո Միածին Որդու միջոցով: Ս. Գրիգորի տեսիլքով Աստված իջավ մեր դրախտավայր երկիրն ու կանխորոշեց հայ ժողովրդի ապագան՝ որպես ընտրյալ մի ժողովուրդ, որն առաջինը հռչակեց քրիստոնեությունը որպես պետական կրոն և իր սրտում ընդունեց Երկնավոր Վարդապետի սիրո վարդապետությունը:



FEAST OF THE APPARITION (“SHOGHAKAT”) OF HOLY ETCHMIADZIN

The Feast of “Shoghakat” of Holy Etchmiadzin commemorates the inauguration of the Cathedral of the Mother See. The fifth century Greek historian Agathangelos tells us of St. Gregory the Illuminator’s divine vision, wherein our Lord Jesus Christ descends from Heaven and strikes the ground with His golden hammer. In view of biblical Mount Ararat, in the city of Vagharshapat, the place where the Only Begotten descended identified the site for the foundation of the new cathedral of the Christian Armenian Nation. The vision of Gregory became known as “Shoghakat”, as the Saint saw a fiery column descending from the sky.

The foundation was laid in 301 A.D. and the Cathedral of Holy Etchmiadzin was consecrated in 303 A.D. on the day of the Feast of the Assumption of the Holy Mother of God. We learn from Archbishop Malachia Ormanian that as the Mother Cathedral of the Armenian Church and Nation is dedicated to St. Mary, the feast of her foundation and inauguration is celebrated in the Armenian Church on the Saturday preceding the Feast of the Assumption of the Holy Mother of God.

For 1,700 years, the Mother See of Holy Etchmiadzin has been, and continues to be, the spiritual heart and centre of the Armenian Church, and is her most sacred sanctuary. Her spiritual, national and historical significance has only increased through the centuries. Through the vision of St. Gregory, God Incarnate descended upon the soil of Armenia and predetermined her future, making Armenia the first nation in the world to adopt Christianity as its official religion.

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ շուքով և հանդիսավորությամբ է նշում Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը: Այն Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից չորրորդն է և Տիրամորը նվիրված տոներից ամենահինը:

Ավանդության համաձայն՝ Ս. Կույսը Հիսուս Քրիստոսի խաչելությունից հետո շուրջ 12 տարի ապրում է Երուսաղեմում՝ Ս. Հովհաննես Ավետարանչի խնամատարության ներքո: Եվ մի օր Գաբրիել հրեշտակապետից ստանում է երկրից երկինք վերափոխման ավետիսը. «Ուրախացի՛ր, բերկրյալդ կանանց մեջ, քանզի քեզ կանչում է մեր Արարիչը, քո Միածին Որդին»: Սուրբ Աստվածածինն այս բարի լուրը հայտնում է իր ազգականներին, բոլոր քրիստոնյաներին և առաքյալներին՝ պատվիրելով իրեն թաղել Գեթսեմանիի ձորակում: Ապա Սուրբ Կույսը Ս. Հովհաննեսին խնդրում է մատուցել աստվածային Պատարագ, որպեսզի հաղորդվի իր Միածին Որդու Մարմնին ու Արյանը:

Այդժամ Ս. Հովհաննեսը Հիսուսի մայր Ս. Մարիամի և նրա ընկերակից կանանց հետ ելնում է Վերնատուն և այնտեղ կատարում Պատարագի սուրբ խորհուրդը: Մինչ նա մատուցում էր զոհության աղոթքը, հանկարծակի որոտ է լսվում, և Ս. Հովհաննեսին սկսում են ձայնակցել սուրբ առաքյալները, ում Սուրբ Հոգին նույն պահին ժողովել էր աշխարհի տարբեր ծայրերից:

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Ս. Հովհաննես Ավետարանիչը վերցնում է կիպարիսի մի փայտ և դրա վրա կերպաձևում Ս. Տիրամոր պատկերը, որպեսզի նրա վերափոխումից հետո այդ սրբությունը մնա իրենց մոտ: Ապա առաքյալները խնդրում են Ս. Տիրամորը, որպեսզի նա փայտեղեն այդ անոթն իր աստվածատիպ դեմքի վրա դնի, օրհնի և իր բարեխոսությամբ խնդրի Տիրոջը, որպեսզի Նա այդ պատկերի միջոցով աշխարհին բարիքներ պարգևի: Ամենօրհնյալ Սրբուհին, պատկերն իր սուրբ ձեռքերի մեջ վերցնելով, օրհնում է՝ խաչակնքելով և իր դեմքին դնելով:

Երբ Ս. Կույսը ննջում է, նրա հոգին ելնում ու խառնվում է լուսեղեն զորքին, իսկ մահճում մնացած մարմինը չի այլակերպվում, այլ նրանից Սուրբ Հոգու շնորհն է բուրում անուշահոտ խնկի պես: Երանելի սուրբ առաքյալներն իրենց ուսերի վրա են վերցնում Աստվածամոր սուրբ նշխարները և ջահերով, մոմերով, սաղմոսերգությամբ ու օրհնությամբ առաջնորդվում դեպի Գեթսեմանի:

Օրհնյալ մարմինը դնում են գերեզման և, ինչպես հարկն է, պահպանում երեք օր: Այդ օրերին անընդհատ հրեշտակների քաղցրաձայն փառաբանության երգեր էին լսվում: Երեք օր հետո՝ առավոտյան, անմարմինների բանակներն իջնում են գերեզմանի վրա: Ապա մեր Տերը լուսափայլ ամպով ու հրեշտակներով մոտենում է Ս. Կույսի գերեզմանին և կնքված գերեզմանից, առանց կնիքը խախտելու, վերցնում է աստվածընկալ մարմինն ու վերանում երկինք:

Առաքյալներից մեկը՝ Ս. Բարդուղիմեոսը, Աստվածամոր ննջման և թաղման օրերին Երուսաղեմում չէր: Իսկ երբ նա գալիս ու իմանում է կատարվածը, խիստ վշտանում է, որ չի արժանացել Աստվածամոր տեսությանը և չի ընդունել վերջին օրհնությունը, ինչպես մյուս առաքյալները: Հետո աղաչում է Ս. Պետրոսին և մյուսներին իրեն ցույց տալ Աստվածածնի մարմինը: Առաքյալները ահուդողով աղոթք են անում ու հոժարելով կատարել իրենց եղբոր փափագը՝ բացում են գերեզմանը և այն դատարկ գտնում: Այնտեղ էին միայն Աստվածամոր պատանքները:

Առաքյալները գոհանում ու փառավորում են Աստծուն և կամենալով մխիթարել իրենց եղբորը՝ Ս. Բարդուղիմեոսին, նրան են տալիս Ս. Տիրամոր պատկերը: Այդժամ Ս. Թովմասը մի երգ է ձոնում Ս. Աստվածամորը, որը մինչև այսօր երգում ենք եկեղեցում. «Փառավորյալ և օրհնյալ միշտ սուրբ Կույս Աստվածածին Մարիամ՝ մայր Քրիստոսի, մատուցիր մեր աղաչանքները Քո Որդուն և մեր Աստծուն»: Քանզի Ս. Աստվածամայրը միշտ կենդանի է Աստծու առջև:

Խաղողօրհնեք

Վերափոխման տոնին՝ հավարտ Ս. Պատարագի, բոլոր եկեղեցիներում կատարվում է խաղողօրհնության կարգ: Բոլոր պտուղներից առավել օրհնվում է խաղողի ողկույզը, քանի որ Տերը խաղողի որթը ամենազորավոր ծառերից ավելի վեր բարձրացրեց և պատվեց առավել, քան մյուս տնկիները՝ Իրեն Խաղողի որթ անվանելով՝ ըստ այն խոսքի, թե. «Ես եմ ճշմարիտ որթատունկը» (Հովհ. 15:1):

Իսկ Տիրոջը սիրով կապվածներին ճյուղեր անվանեց և Հորը՝ Մշակ, որպեսզի Հայրը, էտելով որթատունկը՝ այն պտղաբեր դարձնի արդարության գործում, իսկ էտված ճյուղերը հավիտենական կրակի նյութ դարձնի:

Միածին Որդին Վերնատանը խորհրդավոր ընթրիքի ժամանակ գինին՝ խաղողի արյունը, Իր փրկական Արյան նյութը դարձրեց և Իր ձեռքերի մեջ վերցնելով՝ օրհնեց՝ ասելով. «Սա՛ է Նոր ուխտի Իմ Արյունը» (Մատթ. 26:28): Դրանով մենք գնվեցինք ու ազատվեցինք մեղքերի ծառայությունից ու մահից:

FEAST OF THE ASSUMPTION OF THE HOLY MOTHER OF GOD

Each year on the Sunday closest to the date of August 15, the Armenian Church celebrates the Feast of the Assumption of St. Mary, the Holy Mother of God. In the Calendar of the Armenian Church, this feast is the fourth of five major feasts that are commemorated, and is the oldest one dedicated to St. Mary.

In the Holy Bible, there is little information concerning the details of St. Mary's life. As a result, the story of her Assumption has been preserved and passed on to us through the Holy and Sacred Tradition of the Apostolic Church.

Following the crucifixion of Jesus Christ, the Holy Virgin remains in Jerusalem, and lives under the care of St. John the Evangelist. For nearly 12 years, St. Mary lives by praying, fasting, and often visiting the empty tomb of her beloved Son. During one such visit to the tomb, the Archangel Gabriel appears and gives her the news of her imminent assumption to heaven. St. Mary relays the news to her relatives and all Christians, asking them to bury her in the valley of Gethsemane. St. Mary also asks the Apostle John to celebrate a Divine Liturgy, so she may receive Holy Communion one final time. After receiving Holy Communion, St. Mary returns to her room. As the Apostles prepare to mourn her death, St. John asks the Mother of God to leave an image of her face on a board of wood. St. Mary takes the board, crosses herself and brings it close to her face. Moistening the board with her tears, she asks God that by means of the board, people would be cured from disease. As the Apostles surround St. Mary, an indescribable light appears. The Son of God and the angels of heaven appear in the room. Seeing Christ, St. Mary dies.

St. Bartholomew the Apostle was absent and did not participate in the burial service of St. Mary. Upon his return to Jerusalem, he wishes to see St. Mary for the last time. Per his request, the Apostles open the tomb, yet they do not find the remains of St. Mary. According to His promise, Jesus Christ had delivered His mother to His heavenly kingdom. The Apostles give the board of St. Mary to St. Bartholomew for consolation.

According to Moses of Khoren, St. Bartholomew brings the board to Armenia. It is kept in the Province of Andzav, in a location called Darbnots. Years later, a church is built there in honour of St. Mary, and a convent is opened.

On the Feast of the Assumption of St. Mary, the Ceremony of the Blessing of the Grapes is conducted, and the harvest for the entire year is blessed on that day.

The Armenian Church has a deep and abiding respect towards St. Mary. Special emphasis is placed on her being a mother, her honesty, her unique spirit of humility, her virtuous behaviour and her unselfish dedication. For Armenian women, the Holy Virgin is the embodiment of virtue, pious motherhood, and the protector of family sacredness.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ՏՕՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ.

Ո՞Վ Է ԱՅՆ ՄԱՐԴԸ, ՈՒՄ ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Երբ հոգու լինելու եւ յարութեան մասին վէճով մօտեցան Յիսուսին, Տէրը վկայեց, որ յարութիւնից յետոյ հոգիները հրեշտակների պէս պիտի լինեն: Երբ խօսում ենք մարդու մասին, հոգեւոր եւ մարմնավոր տեսակով նա կարծես կենդանական եւ հրեշտակային աշխարհների միջեւ լինի: Առաքեալը կարծես սա նկարագրի, երբ ասում է. ***«Մարդն ի՞նչ է, որ յիշես նրան... Նրան հրեշտակներից մի փոքր ցած իջեցրիր. Փառքով եւ պատուով պսակեցիր նրան..»*** (Եբր. 2:6-7): Սակայն մի յետաքրքիր դիտարկում կա, որ սուրբ Հայրերը դեռ վաղուց են նկատել. հրեշտակների մասին Ս.Գիրքը չի ասում, որ նրանք էլ ***«Աստծոյ պատկերով եւ նմանութեամբ»*** են ստեղծուած: Վարդապետներից շատերը պնդում են, որ Աստծոյ կողմից մարդու ստեղծման հիմնական նպատակն անկեալ հրեշտակների տեղերը փրկուածներով համալրելն է. ***«Քանզի հրեշտակներին չէ, որ հնազանդեցրեց գալիք աշխարհը, որի մասին մենք խօսում ենք»*** (Եբր. 2:5): Առաւել յետաքրքիր է եւ շատերի համար դժուարընկալելի այն, որ հրեշտակները կոչւում են սպասարկող հոգիներ, ***«որոնք ուղարկւում են ի սպասաւորութիւն նրանց, որ ժառանգելու են փրկութիւնը»*** (Եբր. 1:11):

Իսկ փրկութիւնը ժառանգելու են Փրկչին հաւատացած, մկրտուած եւ ապրող քրիստոնեաները: Հաւատքի մէջ մաքուր եւ սուրբ կենցաղ ունեցողներին յաճախ անուանել են հրեշտակակրօն, հրեշտակակենցաղ, հրեշտակակերպ: Այս կերպ բնութագրումները ոչ ոքի այդքան չեն որակում, որքան Սուրբ Տիրամօրը: Ինչո՞ւ է այս աստիճան յարգանքը, մեծարանքը եւ խոնարհումը Սուրբ Աստուածածնի նկատմամբ, աւելին, քան սուրբերին եւ անգամ հրեշտակներին: Սուրբ Մարիամին յաճած կանչում են «սուրբերի գլուխ», քանի որ կատարեալ Աստուած Խօսքը կատարեալ մարդ եղաւ Սուրբ Կոյսի արգանդում՝ անխառն, անշփոթ եւ անբաժանելի միութեամբ:

Երկնայինի ու երկրայինի հանդիպումն իր միջոցով եղաւ, որի համար որակուեց իբրեւ «Տապանակ Նոր Ուխտի», ում մեր Նարեկացին կոչեց «մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուհի, եղեմ շնչական..»:

Աստուածածնի Վերափոխման տօնը յիշատակն է Քրիստոսի կողմից Իր Մօրը երկինք տանելու: Դրա համար երգում ենք . ***«Սուրբ Աստուած, Սուրբ եւ Հզօր, Սուրբ եւ Անմահ, որ եկիր ի փոխումն Մօր Քոյ եւ Կուսին, ողորմեա՛ մեզ»***: Ննջումից օրեր առաջ Գաբրիել հրեշտակապետը Աստուածամօրը յայտնում է երկինք կանչուելու մասին: Աստծոյ Հոգւո մղումով առաքեալները հաւաքւում են Երուսաղէմում՝ հրաժէշտ տալու Տիրամօրը եւ վկաներ եղան նաեւ թաղումից յետոյ այս հրաշալի դէպքերին: Վերափոխումը մեզ աւելի յստակ է դարձնում խօսքը, որ իսկական մահն առանց Աստծոյ ապրելն է, իսկ Աստծոյ հետ ապրողը վախ չունի մահից: Որ մահը մարմնի եւ հոգու բաժանումը չէ այդքան, որքան հոգեւոր մահը՝ Աստծուց բաժանուելը:

Աստուածամօր մարմնաւոր երկինքը վերափոխումը կոչ եւ հրաւէր է ամէն մարդու՝ ապրելու Աստծոյ հետ, Աստծոյ համար, Իր հետ կենդանի յարաբերութեան մէջ: Ինչպէս մարմինն է մեռնում առանց հոգու, այնպէս էլ հոգին է մեռնում առանց Աստծոյ (Վաղինակ Ծ. Վրդ.): Սա գեղեցիկ օրինակ է՝ տեսնելու այն խնամքը, որ Տէրը բոլորիս նկատմամբ է տածում:

Աւանդաբար Հայոց Աշխարհում այս տօնի շրջանում էր լինում առաջին այգեկութը՝ խաղողաքաղը: Եւ առաջին պտուղը Տիրոջը բերելու ազնիւ մղումով է, որ ժողովուրդը խաղողը բերում էր եկեղեցի՝ օրհնելու, որ կարծես աղօթական յայտարարութիւնն էր, որ սկսուեց խաղողի բերքահաւաքը: Սուրբ Ներսէս Շնորհալի հայրապետի հեղինակած «Խաղողօրհնէքի աղօթքը» լաւագոյնս փոխանցում է այդ ապրումը՝ յիշեցնելով Աստծոյ կողմից մարդուն դրախտի պտուղները կարծես ընծայելը, իսկ ժամանակի լրումին՝ Որդուն մեզ համար ուղարկելը, որ Իրեն Որթատունկ կոչեց: Մենք ամենքս Աստծուն նուիրուելիք հոգեւոր խաղողներ ենք, Որթատունկի ճիւղեր: Մեր սիրտը, բարի գործերը, աղօթքն ու ողորմութիւնները թող դառնան Աստծուն նուիրելի հոգեւոր պտուղները: Աստուած օրհնի ամենքիդ Տիրամօր սուրբ բարեխօսութեամբ. ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2025 **According to the Lectionary of the Armenian Apostolic Church**

18 August	Proverbs 11:30-12:4; Zechariah 2:10-13; 2 Corinthians 6:16-7:1; Luke 1:39-56
19 August	Song of Songs 6:3-8; Malachi 3:1-2; Galatians 3:24-29; Luke 2:1-7
20 August	Song of Songs 4:9-15; 8:14; Isaiah 7:10-16; Galatians 3:29-4:7; Luke 2:1-7
21 August	Proverbs 11:30-12:4; Zechariah 2:10-13; 2 Corinthians 6:16-7:1; Luke 1:39-56
22 August	Song of Songs 6:3-8; Malachi 3:1-2; Galatians 3:24-29; Luke 2:1-7
23 August	Song of Songs 4:9-15; 8:14; Isaiah 7:10-16; Galatians 3:29-4:7; Luke 2:1-7

ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ***Կիրակի, Օգոստոս 17, 2025***

Անոնք որոնք կը փափաքին Սբ Աստուածծնի վերափոխման տօնին առթիւ իրենց պտուղին նուիրատուութիւնները ընել փոխան խաղողի, թող հաճին մոտենալ Ծուխի Հոգաբարձութեան կամ հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակը ***020 7373 8133*** *մինչեւ 10 Օգոստոս 2025.*

Ձեր ուխտը ընդունելի ըլլայ:

Assumption of the Holy Mother-Of-God ***Sunday, 17th August, 2025***

All those wishing to donate grapes or make monetary donations in lieu of grapes, please contact the Parish Council members at church or call parish office ***020 7373 8133*** *until 10th August 2025.* ***Thanking you in advance ,***

St Yeghiche Armenian Church Parish Council

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There is no memorial service this Sunday

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal
Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk